№1146

1928 №436

ՄԱՆԱՍԵՅԻՆԱ Վ.

փոխադրեց ՍԻՄԱԿ

ՋԵՅՐԱՆԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

891.71 Մ
Մ-24

Ca Մ/Հ41
2011-05

ՋԵՅՐԱՆԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

891.71Մ
Մ-24



Խորենը, Վարսիկն ու Վասիկը շատ եյին սիրում իրենց Ջեյրանին։ Շատ սիրուն կով եր Ջեյրանը. ինքը մուգ-կարմիր, պոզերը փոքրիկ ու կեռ, աչքերը մեծ ու չալ, ենքան ել կաթնով եր Ջեյրանը, որ բոլորը զարմանում եյին։ Մի իրիկուն Ջեյրանը նախրից յեկավ կուչ յեկած, նրա մեծ փորը ներս եր ընկել, աչքերի փայլը կորել։ Մայրիկն ու-

24.06.2013

գեց կթել, կաթ չուներ։

Իր սիրուն հորթուկին, իր սովորության համաձայն խուկի չլիզեց, չզգաց — այլ միայն գլուխը թափ տվեց։ Դողում էր ամբողջովին, ոտքի վրա կանգնել չէր կարողանում։ Պառկեց կողքի վրա, տնքում էր ու ծանր շնչում։

— Խորե՛ն ջան, վազի՛ր, Ակոբ ապորը կանչի՛ր,— ասաց մայրիկը,— կովը հիվանդացել է, նա բան կհասկանա։ Հավաքվեցին Ակոբ ապին, Նալբանդ Զաքարը, դալլաք Պետրոսը. ու ամեն մեկը մի բան էր ասում, մի դեղ էր առաջարկում։ Վերջն այս որոշեցին. արորի խոփը դնեն կովի բ ե ր ա ն ը՝ ձեթ խմցընեն։



ՊԵՏ. ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀՍՍՌ-Арм ССР им. А. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.
56955-66

Հենց եդ ժամանակ հայրիկը յեկավ հանդիցը։

Նա կարդացած մարդ եր, եդ տեսակ բժիշկներին ու նրանց դեղերին չեր հավատում։

— Գնացեք, ախպեր, ցրվեցեք, թողեք, թե կսատկի՝ թող սատկի։ Բոլորն ել իրենց տները գնացին։ Մայրիկն ու յերեխաները կովի չորս կողմը կանգնել եյին. փոքրիկները լաց եյին լինում. Խորենը հոնքերը կիտել, լուռ մի կողմն եր նայում։

— Յերեխանցը տար քնացրու, կովին նայիր, յես գնամ բժշկի յետևից,—պատվիրեց հայրիկն ու ձին նստելով գնաց։

— Վա՜յ, Ջեյրա՜ն ջան, վա՜յ, բիժի ջա՜ն, մղկտում եյին յերեխաները. բա՜ չպիտի՜ լավանաս, վա՜յ, բիժի՛ ջան։ Բայց գնացին, քնեցին։ Քնի մեջ նրանք, կարծես, աղմուկ եյին լսում, ձիու վռնաձայն, բարձրաձայն խոսակցություն, Ջեյրանի բառաչը։—Հետո բոլորը լռեց։

Լուսացավ։ Յերեխաները զարթեցին։ Մայրիկն ու հայրիկը տանը չեյին։ Շտապ հագնվեցին, դուրս վազեցին դեպի Ջեյրանը։

Սրահում նրանց առաջը յեկավ մայրիկը, ինչպես ուրախ, ինչպես զվարթ—թեև ամբողջ գիշերը չեր քնել։ Նրա ձեռքին կովկիթը լիքը կաթ եր։

— Ջեյրանը լավացավ, ա՜յ, հայրիկի բերած բժիշկը լավացրեց, կթեցի ու գնաց հանդն արածելու։

ՊԵՏ. ԿԵՆ. ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0383894

4033

ԲԻԲԼԻՈԹԵԿԱ
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՆՈՐ ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

	Գինը
1. Հ. Թումանյան—Շունն ու կատուն պատկերազարդ	50 կ.
2. Վիսալիյ Ռիաճկի,—Առաջին վորսը. պատկերազարդ, փոխադրություն Աթ. Խնկոյան	50 կ.
3. Խնկո Ապեր,—Մեծն Հոկտեմբեր, պատկերազարդ	30 կ.
4. Խնկո Ապեր,—(Ըստ Ագնիվցեվի) Մի գավաթ թեյ	60 կ.

Հ 603

Գրառեպ. № 260 բ. Տիրաժ 3000. Վիմագր. Հայպոլիգ. պատ. 4000.